ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Առաջադրանքների լուծման համար տրվում է **75** րոպե | **3-4**-րդ դասարաններ

- **Ցուցաքանչյուր առաջադրանքի համար տրված պատասխաններից ճիշտ է միայն մեկը:**
- **Չլուծված առաջադրանքի համար միավորներ չեն գումարվում և չեն հանվում:**
- **Մրցույթի մասնակիցը կարող է վաստակել առավելագույնը 110 միավոր:**
- **Մրցույթի ավարտին առաջադրանքների թերթիկը մնում է մասնակցի մոտ:**
- **Մրցույթի մասնակիցներին ներկայացվող գլխավոր պահանջը առաջադրանքներն ինքնուրույն և ազնվորեն կատարելն է:**

3 միավոր գնահատվող առաջադրանքներ

1. Ամենաքիչը քանի՞ տառի փոփոխությամբ կլուծես նկարելուկը:

Ա. մեկ ***Բ.*** երկու ***Գ.*** երեք ***Դ.*** չորս ***Ե.*** հինգ

2. Մեղվիկը թաքցրել է պատասխանը: Գտի՛ր այն:

մագաղաթ = գաթա +

Ա. գամ ***Բ.*** մաս ***Գ.*** թագ ***Դ.*** աղ ***Ե.*** մաղ

3. ***Փունջ, շնորհ, քրքիջ, չքվել, փրփուր*** բառերն այբբենական կարգով դասավորելու դեպքում ո՞ր բառը կլինի 5-րդը:

Ա. քրքիջ ***Բ.*** փրփուր ***Գ.*** փունջ ***Դ.*** չքվել ***Ե.*** շնորհ

4. Ի՞նչ օրինաչափությամբ են դասավորված ***անմեկին, չորսու, կռվեցնող, յոթգլխանի, բազմություն, տասնօրյակ, տասներկուամյա, քսաներեքական, հինգհազարանոց*** բառերը:

Ա. ըստ բառերում տառերի թվի աճման
Բ. ըստ բառերում վանկերի թվի աճման
Գ. ըստ բառերում պարունակվող թվերի աճման
Դ. ըստ բառերում պարունակվող թվերի գումարի նվազման
Ե. ըստ այբբենական կարգի

5. Ի՞նչ բառ է թաքցրել մեղվիկը:
կաթել - թակել
ծախել - խածել

վանել -

Ա. ձգել ***Բ.*** անվանել ***Գ.*** նվվալ ***Դ.*** նավել ***Ե.*** ավել

6. *Երեկ տեսա մի քարավան,*
Ճամփա ելած՝ գնում էր Վան,
Պոչ-պոչ բռնած, շարքով կարգին
Մի-մի հատիկ առած մեջքին:

Ինչի՞ մասին է ժողովրդական հանելուկը:

Ա. վզնոցի ***Բ.*** մրջյունների ***Գ.*** տառերի ***Դ.*** գրքերի ***Ե.*** վտառի

7. Պատասխանի տարբերակներից որո՞ւմ պետք է ❀ ծաղիկն իր կրկնակի հետ հանդես գա, որ ճիշտ բառ ստացվի:

Ա. հա❀անոց ***Բ.*** հա❀աքածու ***Գ.*** հո❀տաշուշան
Դ. հո❀աշուն ***Ե.*** հո❀հար

8. Ի՞նչ բառ է թաքցրել մեղվիկը:

գին, իլիկ, ժխոր, ածուխ, մկրատ,

Ա. թել ***Բ.*** կտուր ***Գ.*** արժեք ***Դ.*** տանիք ***Ե.*** ոհմակ

9. ***Անո՛ւշ, կլինի՞, որ Անուշավանը լինի մեր խմբի գիտունիկը:*** Ո՞ր առածն է նախադասության մեջ գաղտնագրված:

Ա. Լավ է գիտունին գերի, քան անգետին սիրելի:
Բ. Գիտունի հետ քար քաշի, անգետի հետ փլավ մի՛ ուտի:
Գ. Անուշ լեզուն հազար սրի պատասխան կտա:
Դ. Ուշ լինի, նուշ լինի:
Ե. Կուժ, քե՛զ ասեմ, կուլա՛, դու լսիր:

10. Ի՞նչ թիվ պետք է գրել մեղվիկի փոխարեն.

ող - 3, եզր - 5, աթոռ – 4, նկար - 5, շվի – 4, որդ -

Ա. 3 ***Բ.*** 4 ***Գ.*** 5 ***Դ.*** 6 ***Ե.*** 7

4 միավոր գնահատվող առաջադրանքներ

11. Ո՞ր բառն է թաքնվել ստվերանշված վանդակներում:

			ա				
պ	ա	տ		գ	ա	մ	բ
			ա				
			տ				
			ա				
			ն				
			ք				

Ա. շախմատ ***Բ.*** ժանիք ***Գ.*** շաղգամ
Դ. տանիք ***Ե.*** քարշակ

12. *Վարդ - դրոշ, դարակ - կարագ, միրգ - գրավ:*
Ո՞ր բառազույգը կլինի հաջորդը:

Ա. զարդ - դռնակ ***Բ.*** գունդ - դանակ
Գ. լույս - սյուն ***Դ.*** միրգ - գիրք ***Ե.*** գրիչ - չրաման

13. ***Վարկ, կարապ, արկ, որակ, արոր*** բառերը «քամվել» են ինչ-որ բառից: Ո՞րն է այդ բառը:

Ա. պարբերույթ ***Բ.*** պարտակել ***Գ.*** պարփակվել
Դ. պուտավոր ***Ե.*** պարկավոր

14. Ո՞ր բառը պետք է լինի հաջորդը, որպեսզի ***երամ, բազե, արկղ,*** _____ շարքը «բզզա»:

Ա. վտառ ***Բ.*** վարս ***Գ.*** կատու
Դ. սերմ ***Ե.*** երազ

Վերահրատարակումը միայն «Այբ»-ի համաձայնությամբ

15. Ո՞ր բառը պետք է դնել մեղվիկի փոխարեն, որ բերված բոլոր բառերի հետ կազմվեն նոր բառեր:



Ա. քար ***Բ.*** օդ ***Գ.*** հող ***Դ.*** աղ ***Ե.*** մաղ

16. Ո՞ր դարձվածքն է պատկերված նկարելուկով:

Ա. Երկու աչքով նայել:
Բ. Նետը քարին դիպչել:
Գ. Տիկնիկի պես խաղացնել:
Դ. Տիտիկ անել:
Ե. Խաղալիք դառնալ:

17. Նարինեն, Սարգիսն ու Սարոն փնտրում էին իրենց ընկերոջը, որը պահմտոցի խաղալիս հնարամտորեն «թաքնվել» էր իրենց բոլորի անուններում: Ո՞վ էր թաքնվել:

Ա. Սանասարը ***Բ.*** Նաիրին ***Գ.*** Սահակը
Դ. Նարեկը ***Ե.*** Սոնան

18. Գտի՛ր բերված տառային ծածկագրի ճիշտ լուծումը:

Ա.	***Բ.***	***Գ.***	***Դ.***	***Ե.***
624	809	538	512	916
+	+	+	+	+
624	809	538	512	916
1248	1618	1076	1024	1832

ՄԵԿ
+
ՄԵԿ
ԵՐԿՈՒ

19. Կա մի տառ, որն իր տեղը գտել է տրված բոլոր նկարների անվանումներում: Այդ տառն օգնեց Հայկին, որ նկարները վերադասավորի որոշակի օրինաչափությամբ: Պատասխանի տարբերակներից որո՞ւմ է Հայկի ընտրած դասավորությունը բերված:

1 2 3 4 5

Ա. 4, 2, 1, 3, 5 ***Բ.*** 2, 3, 4, 1, 5 ***Գ.*** 3, 4, 5, 1, 2
Դ. 5, 2, 4, 1, 3 ***Ե.*** 2, 5, 4, 3, 1

20. ***Շ, թ, ճ, գ, չ, ք, ժ, դ*** տառերը հերթ էին կանգնել **թա*նվել, զար*ատուի, գո*նոց, բա*կոն, արշ*նանալ, ա*ք, պատ*գամբ** շարքում՝ աստղանիշերի փոխարեն իրենց տեղերը զբաղեցնելու համար: Շարքը լրացնելուց հետո պարզվեց, որ տառերից մեկը հերթում չպետք է լիներ: Ո՞ր տառն էր դա:

Ա. *թ*-ն ***Բ.*** *չ*-ն ***Գ.*** *շ*-ն ***Դ.*** *գ*-ն ***Ե.*** *ժ*-ն

5 միավոր գնահատվող առաջադրանքներ

21. Շողիկը պատասխանի տարբերակներում նշված մի տառ ավելացրեց ***ընկկ*** տառախմբին, վերադասավորեց տառերը և հասկացավ, թե ինչ է պահանջել կատարել ուսուցչուհին: Ո՞ր տառը նա ընտրեց:

Ա. ա ***Բ.*** ու ***Գ.*** ի ***Դ.*** ե ***Ե.*** ը

22. *1.* Տեսնեմ՝ պատեպատ է տալիս իրեն:
2. Մեծանամ՝ քաղաքեքաղաք ման ածեմ:
3. Կարծում եմ՝ կատակ ես անում:
4. Մտածում եմ՝ շուտով ձյուն կգա:
5. Կասկածում եմ, որ նա կգա:

Տրված նախադասություններից մեկն օժտված է մի հետաքրքիր հատկությամբ: Այդ նախադասությունն է.

Ա. առաջինը ***Բ.*** երկրորդը ***Գ.*** երրորդը ***Դ.*** չորրորդը ***Ե.*** հինգերորդը

23. Մայրն ասաց. ***«Սերո՛ւ, ալարո՞ւմ ես: Տան ձեռնահարկում լուծի՛ր անօգտագործելի իրերի հարցը»:***

Ի՞նչ մրգեր է սիրում Սերոբը: Պատասխանը թաքնված է պայմանում:

Ա. տանձ, խնձոր, ծիրան ***Բ.*** բալ, տանձ, ծիրան ***Գ.*** կեռաս, բանան, ծիրան
Դ. սալոր, բալ, ծիրան ***Ե.*** խաղող, բալ, կեռաս

24. Հենզելն ունի վեց գնդիկ, որոնց վրա գրված է մեկական տառ՝ ***կ, վ, ր, կ, չ, դ:*** Գրետելն ունի խորանարդիկներ, որոնց բոլորի վրա գրված է ***ա*** տառը: Քույր ու եղբայր, օգտագործելով գնդիկները և մի քանի խորանարդիկ, կազմեցին հնարավոր ամենաերկար բառը: Քանի՞ տառանի է ստացված բառը:

Ա. 5 ***Բ.*** 6 ***Գ.*** 9 ***Դ.*** 10 ***Ե.*** 12

25. **ԾԱՂԿԻ, ԿՈԿՈՆԸ, ՊԱՐՏԵԶԻ** բառաշարքի բոլոր բառերով և պատասխանի տարբերակներում տրված բառերից որո՞վ են կազմվում իմաստով իրարից տարբեր ամենաքիչը երկու նախադասություն: Բառերի տեղերը կարելի է փոխել, վերջավորությունները՝ ոչ:

Ա. արի ***Բ.*** թող ***Գ.*** լող ***Դ.*** բեր ***Ե.*** հող

26. Պատասխանի տարբերակներից որո՞ւմ տառերը ճիշտ հերթականությամբ դասավորելու դեպքում չես ստանա հայտնի հեքիաթի վերնագիր:

Ա. տամչանակիրփ ***Բ.*** արեբկդաներն ***Գ.*** խորոմըտ
Դ. ասանըտսու ***Ե.*** ահտանայս

27. ԲՈՐ(2) ՀՈՒՐ(2) ՀՈՎ(2) բառաշարքի օգնությամբ Լիլիթը բառ է մտապահել: Փակագծերի թվերը ցույց են տալիս, թե Լիլիթի մտապահած բառի և բառաշարքի տվյալ բառի մեջ քանի ընդհանուր տառ կա, ընդ որում՝ նույն դիրքերում: Լիլիթի մտապահած բառն է՝

Ա. բահ ***Բ.*** հավ ***Գ.*** հոր ***Դ.*** ուրու ***Ե.*** մուր

28. Պատասխանի ո՞ր տարբերակում են իրար համապատասխանում հայկական առածների սկիզբն ու ավարտը:

1. Քիչ խոսիր,	ա. կլուսանա:
2. Ով կարդա,	բ. շատ լսիր:
3. Առանց աքլորի կանչելու էլ	գ. նա մարդ ա:
4. Մեծ բրդուճ կեր,	դ. մինն էլ ավելի տուր:
5. Հացը հացթուխին տուր,	ե. մեծ-մեծ մի՛ խոսիր:

Ա. 1-ե, 2-գ, 3-ա, 4-բ, 5-դ ***Բ.*** 1-ա, 2-գ, 3-բ, 4-ե, 5-դ ***Գ.*** 1-ա, 2-դ, 3-բ, 4-ե, 5-գ
Դ. 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ, 5-ե ***Ե.*** 1-բ, 2-գ, 3-ա, 4-ե, 5-դ

Վերարտադրումը միայն հաստատագրումով